


Մանուկներու Սուրբ Գիրքը  
կը ներկայացնէ



Լաւ  
թագաւորներ,  
գէռ  
թագաւորներ



Written by: Edward Hughes

Illustrated by: Lazarus

Adapted by: Ruth Klassen

Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian

dedicated to my Son Lordling Zareh Varant

funded by: Zareh Seropian & Sons Foundation

special thanks: to my wife

gifted to all the Armenian children around the world. This translation

has been done in the Grace of the Holy Trinity to whom I owe.

Produced by: Bible for Children

[www.M1914.org](http://www.M1914.org)

©2013 Bible for Children, Inc.

License: You have the right to copy or print this story,

as long as you do not sell it.



Տխուր օր էր  
Մանասէի համար:  
Իր հայրը Եզեկիա  
թագաւորը նոր  
մահացած էր:




Հիմա, ինք միայն  
տասնըերկու  
տարեկան,  
Մանասէ նոր  
թագաւորն  
էր Աստուծոյ  
ժողովուրդին  
վրայ Յուդայի  
մէջ:




Ան այն ժամանակ  
չէր գիտեր, բայց  
Մանասէ 55  
տարիներ պիտի  
թագաւորէր:  
Մանասէ  
պահանջեց  
Աստուծոյ  
օգնութիւնը, որ  
ըլլայ լաւ թագաւոր:



Սակայն Մանասէ անտեսեց  
Աստուծոյ եւ գէշութիւն ըրաւ:  
Մանասէ նորէն կառուցեց  
կուռքերը,  
պաշտելու  
խորանները:



Ան փորագրուած նկար  
մըն ալ զետեղեց  
Աստուծոյ սուրբ  
Տաճարին մէջ:




Աստուած Մովսէսի  
միջոցով ըսած էր. "Դու  
պիտի չփորագրես նկարներ:

Դու ն պիտի  
չխոնարհիս  
անոնց  
եւ ոչ ալ  
ծառայես  
անոնց":







Մանասէ սկսաւ կախարդութիւն  
ընել: Ան ժողովուրդը հեռացուց  
Աստուծմէ:




Ան նոյնիսկ իր որդիները այրեց  
իբրեւ զոհ մատուցուած այդ  
կուռքերուն:




Մանասէին անհնազանդութիւնը  
շատ զայրացուց  
Աստուծոյ:



Երբ իր ժողովուրդը անհնազանդի,  
Աստուած կ'արտօնէ անոնց, որ  
պատժուին: Ճիշդ այդպէս եղաւ  
Մանասէի եւ իր իշխած  
ժողովուրդին:



Տերը անոնց վրայ ասորի բանակը  
դրկեց Մանասէն շղթայուած  
Բաբելոն պատանդ տարուեցան:



Տառապելէ ետք  
Բաբելոնի մէջ,  
Մանասէ աղաչեց  
իր Տիրոջ, իր  
Աստուծոն:



Ան ինքզինք  
մեծապես  
խոհեմացուց  
իր հայրերուն  
Աստուծոյ առջեւ  
եւ Անոր աղօթեց:



Այլեւս ան  
կուռքերու  
չէր աղօթեր:







Բայց, կարելի՞ էր,  
որ ողջ Աստուածը  
պատասխաներ  
Մանասէի ամեն  
իր ըրած  
գեշութիւններէն  
եսք:



Այո՛: Աստուած իմացաւ  
թագաւորին աղօթքները եւ  
իրեն Երուսաղէմ  
վերադարձուց,  
իր գահին, նորէն


թագաւորելու իր  
ժողովուրդը:




Այն ատեն Մանասէ գիտցաւ,  
որ Տէրը Աստուածն է:




Մանասէ թագաւոր Նոր անձ մըն  
էր: Ան պատկերը դուրս հանեց  
Աստուծոյ տաճարէն եւ հաւաքեց  
բոլոր օտար չաստուածները  
Երուսաղէմէն:



Ան զանոնք բոլորն ալ դուրս  
նետեց: Ան նորոգեց Տիրոջ  
խորանը եւ շնորհակալական  
զոհեր մատուցեց:



Այդպէ ետք ան ժորովուրդը  
հրամայեց, որ ծառայեն միայն  
Իսրայէլի Տէր Աստուծոյ: Այս  
ի՞նչ փոփոխութիւն Մանասէին:



Երբ Մանասէ մահացաւ, իր  
զաւակը, Ամոն, վերադարձաւ  
Կուռքեր պաշտելու: Բայց ան  
ինքզինք չխոնարհեցուց Տիրոջ  
առջեւ, ինչպէս Մանասէ:



ԵԼ Ամոն աւելի եւ աւելի մեղքեր  
գործեց, վերջապէս իր ծառաները  
սպաննեցին զինք, իր տան մէջ: Ան  
միայն երկու տարի թագաւորեց:





Յաջորդ թագաւորը,  
Յովսիա միայն ուր  
տարեկան էր: Ան  
31 տարիներ  
թագաւորեց  
եւ ամէն  
ինչ Աստուծոյ  
աջքով ճիշդ  
գործեց:



Ան քանդեց բոլոր  
կուռքերը եւ սխալ  
պաշտամունքները:  
Իրաւ, ան բոլոր  
կուռքերը փոշի  
դարձուց:



Լաւ թագաւոր Յովսիփ նաեւ  
մաքրեց եւ նորոգեց Աստուծոյ  
տաճարը: Փոշիներուն մէջէն  
քահանայ մը Օրէնքի  
Գիրքը գտաւ, զոր  
Տէրը տուեր էր  
Մովսէսին:




Երբ թագաւորը  
իմացաւ Օրէնքին  
բառերը, ան  
սաստիկ տխրեցաւ  
եւ պատռեց իր  
հագուստները:



Յովսիա գիտցաւ,  
որ որքան գէշ եւ  
չար եղած էին իր  
նախնիկները  
Աստուծոյ օրէնքը  
անագելով:



Կին մարգարե մը, որ Յալտան կը  
կոչուէր Յովսէփայի փոխանցեց  
Աստուծոյ լուրը:



"Այսպես կ'ըսէ Տէրը. Ահաւասիկ,  
քանի որ ինձի անտեսեցին  
այս գիրքին մէջ ամէն  
անէծքները պիտի  
իջեցնեմ իրենց վրայ":



Բայց քանի որ Յովսիփ խոնարհ եւ  
հնազանդ էր այդ քանը պիտի  
չպատահի մինչեւ որ  
ինք մահանայ:





Աստուած օգնեց Յովսիայի,  
որպէսզի առաջնորդէ իր  
ժողովուրդը ետ  
դէպի Տիրոջ:



Օր մը, երբ ան  
իր բանակը  
կ'առաջնորդէր  
պատերազմի,  
Յովսիա ծանր  
վիրաւորուեցաւ  
թշնամիին  
աղեղներէն:




Իր ծառաները առին  
զինք եւ սայլով տուն  
տարին դէպի  
Երուսաղէմ, ուր  
ան մահացաւ:




Ամբողջ ժողովուրդը  
սուգի մեջ էր եւ  
անոնք երգեր  
յօրինեցին լաւ  
թագաւոր  
Յովսիայի  
մասին:






Քիչ  
ժամանակ ետք,  
թագաւորութիւնը  
վերջ գտաւ:  
Սակայն օր մը,  
թագաւոր մը  
նորէն պիտի  
իշխէ Իսրայէլի  
վրայ:






Անոր անունը  
թագաւորներու  
թագաւոր եւ  
Տէրերու տէր:





Երբ Յիսուս  
Քրիստոս  
եկաւ առաջին  
անգամ, Ան  
մերժուեցաւ եւ  
խաչուեցաւ, ...





... երբ Յիսուս  
Քրիստոս  
անգամ մը  
եւս գայ, ան ոչ  
միայն Իսրայելի  
վրայ թագաւոր  
պիտի ըլլայ,  
այլ ամբողջ  
աշխարհի:





Լաւ թագաւորներ, գեռ թագաւորներ

Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,  
Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

2 Մնացորդաց 33 - 36

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"  
Մադնոս 119:130



վերջ



Այս Սուրբ Գիրքի պատմութիւնը մեզի կը պատմէ մեր հրաշալի Աստուծոյ մասին, որ մեզ ստեղծեց եւ կ'ուզէ, որ մենք զինք ճանչնանք:

-Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք ինք մեղք կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեզ կը սիրէ, որ իր Որդին Յիսուսը մեզի դրկեց, որպէսզի խաչին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներէ քեզի քու մեղքերուդ համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մեջդ կը բնակի իսկ դուն յաւիտեան իր հետ:



Եթէ կ'ուզես մեղքերէդ ազատիլ, հետեւեալը  
ըսէ Աստուծոյ: Տէր Աստուած ես կը  
հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինծի  
համար եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի:  
Կ'աղաչեմ, որ գաս իմ կեանքիս մէջ եւ ներես  
բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր  
կեանք մը ապրիլ, եւ օր մը հետդ ըլլամ,  
յաւիտեան: Օգնէ ինծի որպէսզի քեզի  
համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն  
օր Աստուծոյ հետ խօսիր:  
Յովհաննու 3:16

